ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 93 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1.2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման իրականացման կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 17.12.2024թ.

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

ներքին գործերի նախարարի

« 17 » 12. 2024թ.

Թիվ 93-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կողմից կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Մշտադիտարկումն իրականացնում է ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանման ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող ծառայողը՝ (այսուհետ՝ իրավասու ծառայող) ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձի կանխարգելիչ հաշվառման շրջանակում:

3. Ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառման շրջանակում իրականացվող մշտադիտարկումը նպատակ ունի դիտարկելու ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձի վարքագիծը, վեր հանելու նրա կողմից ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման հնարավոր ռիսկերը և վտանգները:

4. Մշտադիտարկումն իրականացվում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձի և օրինական ներկայացուցչի հետ հանդիպումների միջոցով՝ ամսական առնվազն մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում մշտադիտարկման շրջանակներում իրավասու ծառայողը կարող է հանդիպումներ անցկացնել նաև անչափահասի ընտանիքի այլ անդամի հետ:

5. Մշտադիտարկման ընթացքում իրավասու ծառայողը համագործակցում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձի բնակության, ուսման և աշխատանքի վայրերի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության հետ, եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասը պրոբացիայի ծառայության շահառու է: Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասի հետ հանդիպումներն իրականացվում են նրա բնակության, ուսման և աշխատանքի վայրերում, կամ անչափահասի կամ նրա օրինական ներկայացուցչի առաջարկությամբ՝ այլ վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անչափահասը հրավիրվում է ոստիկանության տարածքային բաժին:

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասի հետ հանդիպումների ընթացքում իրավասու ծառայողը նրա հետ անցկացնում է զրույցներ և իրականացնում բացատրական բնույթի աշխատանքներ: 14 տարին չլրացած՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասի հետ զրույցներն անցկացվում են նրա օրինական ներկայացուցչի կամ մանկավարժի ներկայությամբ: Օրինական ներկայացուցչի հետ զրույցներն անցկացվում են առանց ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասի ներկայության:

7. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասի հետ իրականացված աշխատանքների արդյունքում կատարվում է վարքագծային փոփոխությունների վերաբերյալ գնահատում՝ հետևյալ ցուցիչներով.

1) անչափահասի և ընտանիքի անդամների միջև կոնֆլիկտների առկայությունը կամ բացակայությունը.

2) անչափահասի վերաբերմունքն իր կողմից ընտանեկան և կենցաղային բռնության գործադրմանը.

3) անհանդուրժող կամ ագրեսիվ վարքագծի առկայությունը կամ բացակայությունը.

4) միջանձնային հարաբերություններում անկառավարելի վարքագծի առկայությունը կամ բացակայությունը:

8. Յուրաքանչյուր հանդիպման արդյունքներով կազմվում է համապատասխան տեղեկանք, որում ներառվում են սույն կարգի 7-րդ կետով նախատեսված ցուցիչների վերաբերյալ իրավասու ծառայողի արձանագրումները:

9. Հանդիպման արդյունքներով կազմված տեղեկանքը կցվում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձի վերաբերյալ կազմված կանխարգելիչ հաշվառման քարտին:

10. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձին կանխարգելիչ հաշվառումից հանելու դեպքում մշտադիտարկումը դադարեցվում է: